ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԸ 1915 Թ. ՖՐԱՆՍ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

ՊՈՂՈՍՅԱՆ Ս. Ա.

Միջերկրական ծովի արևելյան ափի հյուսիսում է գտնվում Մուսա լեռը, որի շրջակայքում սփռված էին Սուետիայի հայկական գյուղերը: Սուետիա գավառակը Անտիոքի գավառի արևմտյան՝ Միջերկրականին հարող մասն էր, որի հարավային սահմանն էր Որոնտես գետը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին տեղի հայկական գյուղերը՝ Բիթիասը, Հաջի Հաբիբլին, Յողուն Օլուգը, Խրդր Բեկը, Քեբուսիեն և Վագրֆը, ունեին ավելի քան 6.000 բնակիչ[1]:

Տեղի հայերը հնուց հայտնի էին իրենց արիությամբ և մարտական որակներով: Նրանց մեծ համբավ բերեց 1915 թ. հուլիս–սեպտեմբերին Մուսա լեռան վրա կազմակերպած հաջող դիմա-դրությունը: Մուսալեռցիների այս հերոսամարտը հանգամանորեն ուսումնասիրվել և լուսաբանվել է պատմագրության մեջ: Սակայն պատմաբանների ուշադրությունից վրիպել են մինչև հերոսամարտը այնտեղ դաշնակից զորքերի և հայ կամավորների ափհանում կատարելու, ապստամբություն բարձրացնելու նախագծերը: Պատմագիտության մեջ գրեթե ուսումնասիրված չեն Պորտ Սայիդ տեղափո-խելուց հետո մուսալեռցիների դիմումները բրիտանական ու ֆրանսիական իշխանություններին՝ թուրքերի դեմ պայքարը շարունակելու համար, ինչպես նաև դաշնակիցների կողմից նրանց ռազմական հմտություններն օգտագործելու խնդրի քննարկումները: Հատկապես ուշագրավ է 1915 թ. Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից մուսալեռցիների ռազմական ունակություններն ու հմտություններն օգտագործելու հարցը:

Առաջին աշխարհամարտի տարիներին հայ գործիչները փորձում էին բոլոր հնարավորություններն օգտագործել իրադրությունը կարգավորելու համար: Նրանք 1915 թ. հուլիսին Եգիպտոսում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջոն Մաքսվելին առաջարկեցին ստեղծել հայկական կամավորական բանակ և անհապաղ ռազմական գործողություններ սկսել Կիլիկիայում՝ հայերի տեղահանությունն ու կոտորածը կանխելու նպատակով: Այդ առաջարկը հետաքրքրեց բրիտանացիներին, քանի որ արդեն պարզ էր, որ 1915 թ. փետրվարին սկսած Դարդանելի գործողությունը ձախող-վել էր, և նրանք նոր ուղիներ էին փնտրում իրենց հեղինակու-թյունն Արևելքում պահպանելու համար: Ջ. Մաքսվելի պահանջով Հայ ազգային պաշտպանության կոմիտեն 1915 թ. հուլիսի 24-ին առավել հանգամանալից ծրագիր ներկայացրեց: Ըստ դրա՝ Կիպրոսում կազմավորվելու էր 10.000-անոց հայկական կամավորական զորամաս, որի ծախսերը հոգալու էին հայերը, իսկ բրիտանացիներն ապահովելու էին սպաներով, ռազմամթերքով, օժանդակելու էին փոքրաթիվ ցամաքային ու ծովային ուժերով: Հայերն

---

[1] ***Իսկէնտէրեան Յ.,*** *Սուէտիոյ բարքերը, Գահիրէ, 1917, էջ 5:*

ապստամբություն կազմակերպելու նպատակով զենք ու դրամ էին տեղափոխելու Կիլիկիայի ծովափնյա շրջաններ: Ապա հայկական կամավորական բանակը գրավելու էր Ալեքսանդրետը, Ադանան, Մերսինը: Նախատեսվում էր, որ այնտեղ նրանց կմիանան 25.000 հայ ապստամբներ Կիլիկիայից և 15.000 էլ՝ շրջակա վայրերից: Այդ 50.000-ոց բանակը նրանց կարծիքով բավարար էր ոչ միայն Կիլիկիան ազատագրելու, այլև՝ շարժվելու նրա սահմաններից դուրս: Անհրաժեշտ էր գործողությունն իրականացնել արագորեն՝ կիլիկիահայությանը կոտորածներից ու տեղահանությունից փրկելու համար: Եթե բրիտանացիներն անհրաժեշտ համարեին ավելի փոքրամասշտաբ գործողություն, ապա առաջարկվում էր հավաքագրել միայն 5.000 կամավորների: Այդ զորքը կարող էր մի կողմից գրավել Սուետիան և Քեսաբը, մյուս կողմից՝ Դյորթ Յոլը՝ Ալեքսանդրետի ծոցում, որտեղ կհավաքվեին և արդյունավետ դիմադրություն կկազմակերպեին շրջակայքի հայերը: Այդ երկու գործողությունների հաջող ավարտից հետո կարող էին գրավել Ալեքսանդրետի նավահանգիստն ու Բեյլանի կիրճը, իսկ անհաջողության դեպքում այդ ուժերը կարող էին կենտրոնացվել լեռներում և պարտիզանական պայքար մղել: Այդպիսով՝ նրանք կխախտեին թշնամու հաղորդակցությունը՝ կտրելով հեռագրալարերը, քանդելով երկաթգծերը, այրելով կամուրջները[2]: Սակայն այդ ծրագրերն ուշացած էին, իսկ կիլիկիահայության տեղահանությունից հետո՝ անիրագործելի:

Մուսա լեռան ուղղությամբ փոքրաթիվ, բայց պարենի ու ռազմամթերքի բավարար պաշարով ուժեր ուղարկելու և Սուետիայի 6-7.000 հայերի հետ թուրքերի թիկունքում ռազմական գործողություններ ծավալելու առաջարկով 1915 թ. ամռանը ռամկավար գործիչ Միհրան Տամատյանը դիմեց բրիտանացի նշանավոր դիվանագետ, գնդապետ Մարկ Սայքսին, երբ վերջինս Կահիրեում էր[3]: Մ. Տամատյանը նշեց, որ եթե դաշնակիցները ցանկանում են տեղեկանալ Թուրքիայի ներսում տեղի ունեցող անցուդարձին, լրտեսել թշնամու բանակի տեղաշարժերը, ապա պետք է ուշադրություն դարձնեն Ալեքսանդրետից հարավ: Հայ գործչի համոզմամբ՝ բրիտանացիները կարող էին Ռասխնզիր հրվանդանի մոտ՝ Մուսա լեռան վրա, ցամաք հանել բավարար ռազմամթերքով ու պարենով փոքրաթիվ ուժեր, որի կազմում կլիներ հայ հեղափոխականներից կազմված մի ջոկատ: Սուետիայի գյուղերի 6-7.000 հայերը կմիանային այդ ուժերին և օգտագործելով տեղի անառիկ դիրքը՝ Մուսա լեռը կվերածեին դաշնակիցների համար երկրորդ Ջիբրալթարի՝ թուրքական ծովեզերքում: Տեղի ալավի աղանդին հետևորդ մահմեդականները թուրքերի նկատմամբ թշնամաբար էին տրամադրված և լավ հարաբերությունների մեջ էին հայերի հետ: Նրանք ազատ երթևեկ ունեին Թուրքիայի ներսում և հեշտությամբ կարող էին լրտեսել թշնամու բոլոր

---

[2] Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 203-204.

[3] **Տամատեան Մ.,** *Իմ յուշերէս, Պէյրութ, 1985, էջ 103-104:*

տեղաշարժերը: Մ. Սայքսը այդ տեղեկությունները նոթագրեց և խոստացավ հայտնել ուր որ պետք է:

1915 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին մուսալեռցիների կազմակերպած հերոսամարտը ցույց տվեց, որ Մ. Տամատյանի առաջարկներն իրատեսական էին: Սուետիահայերը 1915 թ. հուլիսի 30-ին գաղթելու հրաման ստացան, սակայն որոշեցին չենթարկվել հրամանին և բարձրանալով մոտակա Մուսա լեռը՝ ապստամբեցին: Նրանցից զենք վերցնելու ընդունակ էին 700-800-ը, բայց ռազմական գործողություններին մասնակցեցին 400-500-ը, քանի որ բավարար քանակի զենք չունեին[4]: 1915 թ. սեպտեմբերին մուսալեռցիները փրկվեցին ֆրանսիական նավատորմի կողմից և ապաստան գտան Պորտ Սայիդում: Մուսալեռցիների հերոսական ինքնապաշտպանությունը նավից դիտող «Գիշեն» հածանավի նավապետ Բրիսոնը նշում է. «Ես առանց տատանվելու կարող եմ ասել, որ այս շրջանի կռվի տեսակետից՝ մեկ սուետացին հինգ ֆրանսիական զինվոր արժե»[5]:

Մուսալեռցիների՝ Պորտ Սայիդ տեղափոխվելուց հետո՝ սեպտեմբերի 29-ին, Կահիրեի ֆրանսիական դեսպան Ալեքսանդր Դեֆրանսն արտգործնախարար Թեոֆիլ Դելկասեին ուղարկած զեկուցագրում, անդրադառնալով Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեի նախագծերին, նշում էր, որ դրանք շատ արդյունավետ կլինեին, եթե գործադրվեին: Դրա ապացույցն էր համարում այն, որ մուսալեռցիները սակավաթիվ ուժերով, հրացաններով ու զինամթերքով կարողացել էին մոտ 40 օր հաջողությամբ դիմադրել թուրքերին: «Հայկական պաշտպանության կոմիտեի ծրագիրը լավ էր մտահղացված, և որ Կիլիկիայում ու Սիրիայի հյուսիսում թուրքերի համար ահռելի դժվարությունների հարուցումը դաշնակիցների համար կարող էր դյուրին լինել, եթե նրանք այդ նպատակահարմար գտնեին»[6],- գրում էր դեսպանը:

Հայ քաջամարտիկները Եգիպտոսում բրիտանական և ֆրանսիական իշխանություններից շարունակեցին պահանջել, որպեսզի իրենց զենք տան և ուղարկեն կռվելու թուրքերի դեմ[7]: Նրանց ռազմական ունակություններն օգտագործելու հարցը դարձավ ֆրանս-բրիտանական իշխանությունների ակտիվ քննարկման առարկա: Գեներալ Ջ. Մաքսվելը, մուսալեռցիների առաջնորդներից տեղեկանալով, որ նրանք կարող են տրամադրել 500 զինվորներ, նախատեսում էր նույնքան հայ կամավորներ հավաքել նաև Եգիպտոսում, կազմավորել հայկական լեգեոն և այն օգտագործել Ալեքսանդրետի շրջա-նում հարձակումներ գործելու համար: Նախատեսվում էր հայկական ուժերին ափ հանել Թուփրակ-Կալեի և Որոնտեսի գետաբերանի

---

[4] **Իսկէնտէրեան Յ.,** *Սուէտիոյ ապստամբութիւնը, Գահիրէ, 1915, էջ 12-13, 48:*

[5] *Երիտասարդ Հայաստան, Չիկագո, 26.10.1918:*

[6] **Պեյլերյան Ա.,** *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, Ե., 2005, էջ 157-158, 160, 182-183:*

[7] **Պարթեւեան Ս.,** *Արարա: Հայկական լէգեոնը, Իզմիր, 1919, էջ 59-60:*

միջև, քանդել Հալեպի և Ադանայի նահանգներն իրար միացնող Բաղչեի թունելը, գրավել Բեյլանի կիրճը, կատարել մի շարք այլ գործողություններ[8]: Սակայն ֆրանսիական իշխանությունները կտրականապես դեմ էին կիլիկիահայերին բրիտանական ազդեցությանը ենթարկելու գաղափարին:

Արդեն 1915 թ. սեպտեմբերի 17-ին Թ. Դելկասեն Ա. Դեֆրանսին հարցում կատարեց, թե արդյո՞ք կարող են մուսալեռցիներին զինվորագրել Արևելքի արտասահմանյան գումարտակին[9]: Այդ ժամանակ քննարկվում էր Կիլիկիայում ափհանում կատարելու ֆրանսիական գեներալ Մորիս Սարրայի ծրագիրը: Սեպտեմբերի 19-ին ֆրանսիական դեսպանը հեռագրով պատասխանեց, որ կարող են մուսա-լեռցիներից հավաքագրել 500 լավ զինվորներ: Նա տեղեկացրեց նաև, որ գեներալ Ջ. Մաքսվելը նախատեսում է հայկական լեգեոն կազմել, այն համալրել ամերիկահայ կամավորներով և հարձակումներ կատարել Ալեքսանդրետի շրջանում[10]: Իսկ սեպտեմբերի 22-ին Ա. Դեֆրանսը արտգործնախարարին տեղեկացրեց, որ հայերը զենք ու զինամթերք են պահանջել թուրքերի դեմ կռվելու համար: Հայերը հայտնել էին, որ գերադասում են գործակցել Ֆրանսիայի հետ, սակայն եթե Մեծ Բրիտանիան պահանջի իրենց համագործակցությունը՝ չեն մերժի: Դեսպանը կարծում էր, որ հայերը լավ պարտիզաններ կլինեն, սակայն կասկածում էր հայերից կանոնավոր զորք կազմելու հնարավորությանը[11]: Հաջորդ օրը Ա. Դեֆրանսը նոր զեկուցագիր ուղարկեց Թ. Դելկասեին՝ նշելով մուսալեռցիների մարտնչելու վճռականության մասին: Հայերը պատրաստակամություն էին հայտնել Ֆրանսիայից օժանդակություն ստանալու դեպքում մոտ մեկ ամսվա ընթացքում կազմավորել 4.000-անոց կամավորական բանակ, ափհանում կատարել Ալեքսանդրետի ծոցում, գրավել Բեյլանի ու Բաղչեի կիրճերը, որոնք Ամանոսի լեռներով անցնող միակ ճանապարհներն էին և կապում էին Ադանայի ու Հալեպի նահանգները[12]:

Շուտով Ջ. Մաքսվելը ևս ֆրանսիացիներին առաջարկեց հայերին զենք տալ և ուղարկել իրենց լեռները, որպեսզի ապստամբություն բարձրացնեն: Նա ցանկություն հայտնեց, որ Ֆրանսիան հայերի հարցը իր վրա վերցնի[13]: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կիլիկիան գտնվում էր ֆրանսիական շահերի գոտում: Դեռևս 1915 թ. մարտի 20-ին Թ. Դելկասեն Լոնդոնի ու Հռոմի դեսպանատներին ուղարկած հուշագրում տեղեկացնում էր, որ Օսմանյան կայսրության բաժանման դեպքում Ֆրանսիային պետք է անցնեին Հալեպի, Ադանայի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգները, որով

---

[8] **Պեյլերյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 188:*

[9] *Նույն տեղում, էջ 151:*

[10] **Գարամանուկեան Ա.,** *Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքա-կան հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. Ե, Պէյրութ, 1974, էջ 63:*

11 ***Պեյլերյան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 161:*

[12] *Նույն տեղում, էջ 179:*

[13] ***Գարամանուկեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 64:*

իրենց վերահսկողության տակ կանցներ Կոնիայից դեպի Միջագետք գնացող Բաղդադի երկաթուղին[14]: Այդ իրավունքները ճանաչվել էին նաև Անտանտի մյուս տերությունների կողմից[15]:

Սակայն հայկական զորամասի միջոցով Կիլիկիայում ռազմական գործողություններ ծավալելը ոչ արդյունավետ էր համարում Ֆրանսիայի ռազմական նախարար Ալեքսանդր Միլերանը: Դարդանելում հունական անկանոն բանակի ձախողման փաստը հաշվի առնելով՝ նա թերահավատությամբ էր վերաբերվում հայկական զորամասով թուրքական ափերի մոտ հաջող գործողություններ ծավալելու գաղափարին: Նա առաջարկում էր հայերին ամբողջ պատերազմի ընթացքի համար զինվորագրել Արտասահմանյան լեգեոնում և ուղարկել Դարդանել[16]:

Մուսալեռցիներին կամավորագրելու և Կիլիկիան ազատագրելու գործողության մեջ օգտագործելու առաջարկով սեպտեմբերի 29-ին Ֆրանսիայի ԱԳՆ Ասիա-Օվկանիայի վարչության պետ Ժան Գուին դիմեց նաև փարիզաբնակ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Արշակ Չոպանյանը[17]:

Սեպտեմբերի 22-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալ Դարրիոն ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին ուղարկած ընդարձակ զեկուցագրում նկարագրում էր Միջերկրականի արևելյան ափին իրենց համար ստեղծված բարենպաստ իրավիճակը և առաջարկում էր դիմել վճռական գործողությունների[18]: Նա արդյունավետ էր համարում ափհանում կատարելը Ալեքսանդրետի ծոցում, որից հետո կգրավեին Թոփրակ-Կալեի երկաթուղային հանգույցը և Տավրոսից Բոզանտ տանող ելքերը: Դրանից հետո ծովային ու ցամաքային զորքերը համատեղ գործողություններով կարող էին հեշտությամբ շարժվել դեպի հարավ և ազատագրել Սիրիան, որտեղ այդ պահին թուրքական բանակն ուներ 20.000 զինվոր, և հաջողության հասնելու համար իրենց բավարար կլիներ ընդամենը մեկ բանակային կորպուս: Ծովակալը գտնում էր, որ եթե Ֆրանսիան ի վիճակի չլինի պահանջվող քանակի զորք ուղարկել, ապա պետք է զինեին թուրքերի նկատմամբ ատելությամբ լցված տեղական բնակչությանը: Նա խնդրում էր, որպես առաջին քայլ, իրեն տրամադրել 800 հրացան և զինամթերք՝ մուսալեռցիներին զինելու համար: «Այս ձևով զինված ու լավ մարզված մարտունակ հայերը կարճ ժամանակում վեր կածվեն ահարկու ուժի, որը

---

[14] **Peter F. E.,** *France's Middle Eastern Ambitions, Sykes-Picot Negotiations and the Oil Fields of Mosul, 1915-1918 (The Journal of Modern History, The University of Chicago Press, Vol. 66, No. 4, Dec., 1994, p. 703).*

[15] **Kerner Robert J.** *Russia, the Straits, and Constantinople, 1914-1915 (The Journal of Modern History, The University of Chicago Press, Vol. 1, No. 3, Sept., 1929, p. 414).*

[16] ***Պեյլերյան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 163:*

[17] ***Գարամանուկեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 64:*

[18] ***Պեյլերյան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 170-176:*

խիստ կարգապահության վարժվելուն պես, հնարավոր կլինի մոտ ապագայում կրկին վերադարձնել ցամաք, լավագույն ձևով օգտագործելով ի նպաստ մեր ռազմական գործողության»[19], - մատնանշում էր փոխծովակալը: Նա նախատեսում էր զինել ինչպես Անտիոքի շրջանի հայերին, այնպես էլ՝ լիբանանցիներին: Դարրիոն պահանջում էր տրամադրել 20.000 հրացան ու ռազմամթերք այդ համընդհանուր ապստամբությունը սկսելու և հաղթական ավարտի հասցնելու համար:

Հոկտեմբերի 1-ին Ա. Դեֆրանսը Թ. Դելկասեին ուղարկած զեկուցագրում լիովին հավանություն էր տալիս ափհանում կատարելու Դարրիոյի ծրագրին, հաստատում էր, որ Սիրիայում թուրքերը փոքրաթիվ ուժեր ունեն, որոնք բարոյալքված վիճակում են: Սակայն նա դեմ էր տեղական ժողովուրդների ուժերով Սիրիան ազատագրելու ծրագրին, թեև դա համարում էր իրագործելի: Ըստ նրա՝ եթե առանց Ֆրանսիայի ղեկավարության ու գործուն մասնակցության թուրքերը վտարվեն Սիրիայից, ապա իրենք հետագայում ստիպված կլինեն այդ երկրամասը կրկին գրավել՝ իբր այնտեղ անիշխանությունը վերացնելու և թուրքերի վերադարձը կանխելու պատրվակով: Իսկ մուսալեռցիներից կազմված զորամասը փոխծովակալի համոզմամբ պետք է օգտագործեին միայն թուրքական ափերում դիվերսիաներ կազմակերպելու համար, որից հետո այն պետք է վերադառնար: Նա լավագույն տարբերակ էր համարում ֆրանսիական ուժերով ռազմարշավի կազմակերպումը և Սիրիայի գրավումը[20]:

Փաստորեն, ֆրանսիացի դիվանագետը դեմ էր առանց ֆրանսիական բանակի միջամտության Սիրիայի և Կիլիկիայի գրավմանը, քանի որ հետագայում կարող էին բարդություններ ծագել, երբ այդ տարածքները փորձեին ֆրանսիական գաղութի վերածել: Նա նույնիսկ դեմ էր փոքրաքանակ հայկական ուժերին այդ տարածքներում մշտական ռազմական գործողությունների ուղարկելու մտքին՝ վախենալով, որ հայկական ապստամբական հաջող շարժումը հիմքեր կստեղծեր հայկական ինքնավարության համար: Զեկուցագրի վերջում Ա. Դեֆրանսը բերում է այդ հարցի շուրջ Ջ. Մաքսվելի կարծիքը: Վերջինս Եգիպտոսի դեմ հարձակման վտանգը վերացնելու համար գտնում էր, որ «հարկ է գործել Ալեքսանդրետի տարածաշրջանում: Բայց ֆրանսիացիներն ազատ ուժեր չունեն այդ վայրերում գործողություն իրականացնելու համար, իսկ մենք չենք համարձակվում գնալ այնտեղ՝ ֆրանսիացիներին տհաճություն չպատճառելու համար»[21]:

Հոկտեմբերի 2-ին Դարրիոն Վ. Օգանյորին ուղարկած նոր զեկուցագրում կրկին պնդում էր մուսալեռցիներից ու եգիպտահայերից զորամաս կազմավորելու առաջարկը: Նա կարծում էր՝ Սուեզի ջրանցքի գրոհի ժամանակ թուրքերից բռնագրավված մաուզեր հրացաններով և զինամթերքով

---

[19] Նույն տեղում, էջ 176:

[20] *Նույն տեղում, էջ 194-196:*

[21] *Նույն տեղում, էջ 196:*

կարող էին զինել ավելի քան 1.000 հայերի: Այդ զորամասը դրվելու էր ֆրանսիացի 15 սպաների և 40 ենթասպաների հրամանատարության ներքո. անհրաժեշտության դեպքում նրանց կտրամադրվեր 4 լեռնային թնդանոթ: Պարտիզանական գործողություններ էին կատարվելու Ալեքսանդրետի ու Անտիոքի շրջանում: Փոխծովակալը միաժամանակ մտավախություն էր հայտնում, որ բրիտանացիներն աչք ունեն Ալեքսանդրետի ու Սիրիայի վրա և անհրաժեշտ էր համարում, որ Փարիզն ու Լոնդոնը վերջնական համաձայնություն կայացնեին Սիրիան ֆրանսիական ազդեցության գոտի ճանաչելու հարցում, և այնտեղ ծավալվելիք ռազմական գործողությունները ղեկավարեին ֆրանսիացիները: Նաև առաջարկում էր այնպես անել, որ հայերը չընկնեն բրիտանացիների ազդեցության տակ[22]:

Հոկտեմբերի 3-ին Ա. Դեֆրանսը Դարրիոյին ուղարկած նամակում հավանություն էր տալիս դեպի Սիրիա ռազմարշավ կազմակերպելու նախագծին, սակայն դա հավանական չէր համարում ֆրանսիական զորքերի պակասի պատճառով: Միաժամանակ դեմ էր արտահայտվում հայ և սիրիացի բնակչությանը զինելուն և ապստամբության մղելուն: Դա բացատրում էր նրանով, որ իրենք չեն կարող ապստամբներին արդյունավետ օգնություն տրամադրել, կանոնավոր զորքերով աջակցել, իսկ անհաջողության դեպքում նրանց պաշտպանել սպասվող սարսափելի բռնություններից ու ճնշումներից[23]: Այս թվացյալ մարդասիրական կեցվածքը բխում էր ոչ թե հայերի ու սիրիացիների նկատմամբ դեսպանի ունեցած դրական վերաբերմունքից, այլ ապստամբության հաջողության դեպքում այդ տարածաշրջանում Ֆրանսիայի ունեցած հավակնությունները կորցնելու մտավախությունից:

Դարրիոն հոկտեմբերի 15-ին ռազմածովային նախարարին ուղար-կած զեկուցագրում զգուշացնում էր, որ չի կարելի ընթացք տալ մուսալեռցիներին Մուդրոսում որպես բանվորներ օգտագործելու Ա. Միլերանի առաջարկին, քանի որ մուսալեռցիները մարտունակ և հպարտ մարդիկ են, և դա կարող է վիրավորել նրանց արժանապատվությունը, անբարյացակամ վերաբերմունք առաջացնել Ֆրանսիայի հանդեպ: Նա կրկին առաջարկում էր զինել հայերին և պարտիզանական պայքարի ուղարկել իրենց լեռները կամ ծայրահեղ դեպքում ընդգրկել Արտասահմանյան լեգեոնի մեջ[24]:

Հոկտեմբերի 28-ին հայկական ուժերն օգտագործելու հարցի շուրջ Դարրիոն կրկին զեկուցագիր ուղարկեց Վ. Օգանյորին, իսկ պատճենը՝ ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար փոխծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեին: Նա տեղեկացնում էր, որ գերմանա-թուրքական կողմը նոր հարձակում է նախապատրաստում Սուեզի ուղղությամբ, և այն կանխելու համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Սիրիայում: Նշում էր, որ Ֆրանսիան ներկա դրությամբ ռազմարշավի համար մարդկային ու նյութական միջոցներ չունի, հետևաբար

---

[22] *Նույն տեղում, էջ 199-203:*

[23] *Նույն տեղում, էջ 203-204:*

[24] Նույն տեղում, էջ 211-212:

լավագույն միջոցը պարտիզանական պատերազմն է: Պարզաբանում էր, որ մուսալեռցիներից ու եգիպտահայերից բացի, կարող էին զինել մեծ թվով կամավորների Ամերիկայից, որոնք, լսելով հայկական զանգվածային ջարդերի մասին, ցանկանում էին վրեժ լուծել թուրքերից: Նրանց պետք է ուղարկեին Ալեքսանդրետի շրջանը, ուր թուրքական զորքերի դեմ արդյունավետ պայքար կարող էին ծավալել: Նա վստահ էր, որ հայերի զինումը բարդություններ չի հարուցի իրենց համար: Փոխծովակալը հավաստիացնում էր, որ հայերը ֆրանսամետ են, նշում էր, որ Պորտ Սայիդում են նրանց ընտանիքները, որոնք նրանց նվիրվածության ամենաանառարկելի երաշխիքներն են: Հայերն առաջին հերթին պետք է ավերեին Բաղչեի թունելը և Ռաջուի կամուրջը: Դրանով կխզվեր Թուրքիայի և Սիրիայի միջև եղած արագ հաղորդակցության ճանապարհը, և կխոչընդոտվեր Սուեզի դեմ հարձակվելու ծրագիրը: Հայերին մարզելու գործը Դարրիոն պատրաստ էր իրականացնել իր ղեկավարած երրորդ նավատորմի անձնակազմի միջոցով: Վերջում նա ավելացնում էր, որ բրիտանացիներն արդեն նախապատրաստական աշխատանքներ են ձեռնարկել հայերին մարզելու և արագ օգտագործելու նպատակով[25]:

Հայերի ռազմական ուժն օգտագործելու գաղափարը ավելի գործնական հողի վրա դնելու նպատակով ֆրանսիացի ծովայինները սկսեցին մարզել 250 մուսալեռցի կամավորների: Այդ գործը ստանձնեց ռազմածովային կապիտան, «Ժորեգիբերի» նավի հրամանատար Բենուա դ'Ազին: Նրա տեղակալ նշանակվեց ֆրանսիական բանակի հայազգի ծովային սպա Տիրան Թեքեյանը[26]: Վերջինս վկայում է. «Մուսա լեռան հայերը, որոնց մենք փրկեցինք, չկարողացան համակերպվել իրենց լեռները ինքնակամ թողնելու, անիծյալ թուրքերի դեմ պայքարը դադարեցնելու իրողության հետ: Բոլորն էլ համակված էին ատելությամբ ու վրիժառությամբ: Ամեն օր ես ընդունում էի նրանց պատվիրակներին, որոնք ինձ էին ներկայացնում ռազմա-վարական այս կամ այն ծրագիրը: Իմ հրամանատարները շատ շուտ հասկացան՝ նման հանդուգն երիտասարդությանը չէր կարելի թույլ տալ, որ Պորտ Սաիդի ավազների վրա երկար տեղում դոփի: Ծովային սպայակազմը ավելի մոտիկից հետաքրքրվեց հայերով, ու քիչ անց նրանք, ովքեր ցանկանում էին, հենց վրանավանում սկսեցին զինվորական հատուկ կրթություն ստանալ»[27]: «Ժորեգիբերի» ֆրեգատը վերանորոգման ենթարկվելու համար հարկադրված էր բավական երկար ժամանակ մնալ Պորտ Սայիդում: Դա էր պատճառը, որ Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի նոր հրամանատար, փոխծովակալ Մորոն Բենուա դ'Ազիին հանձնարարեց մարզել հայ մարտիկներին: Եգիպտոսում բրիտանական գաղտնի ծառայության ղեկավար

---

[25] Նույն տեղում, էջ 223-225:

[26] **Թեքեյան Շ. Տ.,** *Մուսա լեռան հայերի փրկությունը (Հիշողության էջեր), Ե., 2002, էջ 51:*

[27] Նույն տեղում:

գնդապետ Էլգուդը սկզբնական շրջանում 25 մաուզեր տիպի հրացան տրամադրեց սովորեցնելու համար: Հայերին ուսուցանում էին հրաձգություն ու տեղանքը ճիշտ օգտագործելու մասին գիտելիքներ, նրանցից նախատեսվում էր ոչ թե կանոնավոր բանակային միավոր կազմավորել, այլ պարտիզանական ջոկատ[28]: Կարճ ժամանակում այդ վաշտը պատրաստ էր ռազմական գործողությունների:

Սակայն իրավիճակը փոխվեց, երբ 1915 թ. հոկտեմբերի 29-ին Ֆրանսիայում վարչապետի և ԱԳ նախարարի պաշտոնը ստանձնեց Արիստիդ Բրիանը: Նոր կառավարությունը փոխեց իր վերաբերմունքը Կիլիկիայում կամ Սիրիայում ափհանում կատարելու, ինչպես նաև հայկական զինուժ օգտագործելու հարցերի շուրջ:

Նոյեմբերի 2-ին փոխծովակալ Մորոն ռազմածովային նախարար Լուսիեն Լակազին ուղարկած տեղեկագրում հավաստիացնում էր, որ մուսալեռցիները քաջ ու կռվող ժողովուրդ են, առաջարկում էր նրանց զինել և ուղարկել փոքր դիվերսիոն արշավանքների թուրքական երկաթուղիների ուղղությամբ[29]: Սակայն նոյեմբերի 9-ին Ֆրանսիայի վարչապետ և ԱԳ նախարար Արիստիդ Բրիանի՝ Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնին ուղարկած նամակից տեղեկանում ենք, որ նա համամիտ էր Ա. Դեֆրանսի զգուշավոր գործունեությանը Եգիպտոսում և դեմ էր Կիլիկիայում հայերի ապստամբություն սկսելուն: Նա կողմ էր մուսալեռցի մարտունակ տղամարդկանց որպես բանվորներ Մուդրոս ուղարկելուն՝ առաջարկելով նրանց առավել բարձր աշխատավարձ տալ, քան այնտեղ աշխատող սոմալիները կամ թուրք գերիներն էին ստանում: Դրանով հույս ուներ աշխատանքով ապահովել մուսալեռցիներին և նրանց հեռացնել Եգիպտոսից, ուր կարող էին «ոգևորել արկածախնդիրներին»[30]: Նոյեմբերի 10-ին Ա. Բրիանը ռազմածովային նախարար դերծովակալ Լ. Լակազին ուղարկած ճեպագրում հավանություն չէր տալիս Կիլիկիայում հայկական ապստամբության և Սիրիայում գործողություններ ծավալելու Հայկական պաշտպանության կոմիտեի և Դարրիոյի առաջարկներին, նշում էր, որ դրանք միայն կհանգեցնեն համընդհանուր կոտորածների, որի պատասխանատվությունը կբարդվի դաշնակից տերությունների վրա[31]:

Նոյեմբերի 13-ին ռազմական նախարար Ժոզեֆ Գալլիենին Ա. Բրիանին տեղեկացրեց, որ հրաժարվել է մուսալեռցիներին որպես մշակներ օգտագործելու նախկին ծրագրից՝ հաշվի առնելով այդ աշխատանքին նրանց նվազ օգտակարությունը և իբրև մարտիկներ ծառայելու նրանց ցանկությունը:

---

[28] **Պեյլերյան Ա.,** նշվ. աշխ., էջ 234-236:
[29] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 65-66:
[30] **Պեյլերյան Ա.,** նշվ. աշխ., էջ 226-227:
[31] Նույն տեղում, էջ 228:

Միաժամանակ տեղեկացնում էր, որ ռազմածովային նախարարը չի պատրաստվում հայերից անկանոն զորքերի կորպուս կազմավորել[32]:

Այսպիսով, Ա. Բրիանի կառավարության իշխանության գալով, մուսալեռցիներին ռազմական նպատակներով օգտագործելու, Կիլիկիայի ուղղությամբ կռվող հայկական զորամաս ստեղծելու կամ այնտեղ ֆրանսիական զորքերի միջոցով ափհանում կատարելու նախագծերը որոշ ժամանակով մի կողմ դրվեցին:

Փաստորեն 1915 թվականին մուսալեռցի քաջամարտիկների ռազմական ունակությունները հայրենի եզերքում կամ Կիլիկիայի որևէ այլ վայրում օգտագործելու գաղափարը լուրջ քննարկումների առիթ էր դարձել ֆրանս-բրիտանական իշխանությունների համար: Այս համատեքստում առաջադրվեցին մուսալեռցիների հիմքի վրա հայկական ավելի մեծ զորամաս կազմավորելու մասին մի քանի նախագծեր ևս: Սակայն 1915 թ. հոկտեմբերի վերջին իշխանության եկած ֆրանսիական նոր կառավարությունը հրաժարվեց հայերի ռազմական ունակություններն օգտագործելու, Կիլիկիան ազատագրելու նախկինում առաջ քաշված ծրագրերից: Այսպիսով՝ 1915 թ. ամռանը և աշնանը քննարկման առարկա դարձած մի շարք ռազմական նախագծեր, որոնք առնչվում էին Մուսա լեռան մոտ դաշնակիցների կամ հայ կամավորների ափհանում կատարելուն, ժամանակավորապես սառեցվեցին: Սակայն հարկ է ընդգծել, որ բառացիորեն մի քանի ամիս անց ֆրանսիական կառավարությունը այս նախագծերը կրկին քննարկման դրեց: Դրա շնորհիվ 1916 թ. վերջին կազմավորվեց Հայկական լեգեոնը, որը հետագայում կարևոր դեր ունեցավ Պաղեստինի, Սիրիայի և Կիլիկիայի ազատագրման գործում:

МУСАДАГСКИЕ АРМЯНЕ ВО ФРАНКО-БРИТАНСКИХ ПРОЕКТАХ В 1915 Г.

ПОГОСЯН С. А.

Резюме

Летом и осенью 1915 г. ряд военных проектов, касающихся высадки союзников или армянских добровольцев вблизи Муса-дага, стали предметом жарких дискуссий. После успешной самообороны армян Муса-дага французские и бри-танские власти обсуждали, как использовать их военные навыки в Киликии. Были предложены проекты формирования более крупной воинской части в основном из муса-дагских армян. К сожалению, в конце октября 1915 года новое

[32] Նույն տեղում, էջ 229:

французское правительство отклонило проекты по использованию военного потенциала армян и освобождению Киликии.

THE MUSA DAGH ARMENIANS IN FRANCO-BRITISH PLANS IN 1915

S. POGHOSYAN

Abstract

In the summer and autumn of 1915, a number of military projects were the subject of discussion on allies' troops and Armenian volunteers landing at Musa Dagh. After successful self-defense of Musa Dagh Armenians, the French and British authorities discussed how to use their military potential in Cilicia. There were also projects proposed about forming a larger military unit on the basis of Musa Dagh Armenians. Unfortunately, late in October 1915, the new French government rejected the projects of liberation of Cilicia, as well as the projects of deploying the military potential of Armenians.